

հետ ուսերուն զէմ, որուն վրայ Սահլ ևրկաթեայ կապանքի տակ առաւ Բարակը:

Տարարի կը շարունակէ պատմել թէ ալ-Աֆշին նախ լրտեսով մը հաստատեց թէ Սահլ ճիշտ ու ճիշտ Բարակն է, որ ունի իր բերդին մէջ: Սահլ զեռ պոյճ է Բարակէն: Ալ-Աֆշին իր հրամանատարներէն Ապու Սայիտը եւ Բուզբարահը զրկեց որ ըստ Մասուգիի՝ Բուժագահ կը կոչուէր, որուն հետ ալ-Աֆշին զրկեց նաեւ 4·000 զինուոր՝ Բարակը ձերբակալելու համար: Իրն ալ Ատիր՝ Բուզբարահը կը կոչէ Բուրամարահ, իսկ Դինուարի՝ Յուզբարահ:

Տարարի կը վկայէ որ ալ-Աֆշինի զըրկած հրամանատարները իրենց հետ ունէին զինուորներ, որոնք եթէ իրապէս՝ Մասուգիի ըսածին պէս՝ 4·000ի չափ էին, այն ատեն աւելի կը հաստատուի մեր կասկածը՝ թէ Սահլ առանձին եւ անոյժ չէր գտած Բարակը, եւ վերջինս զեռ ոյժ ունէր: Սահլի եւ արար հրամանատարներուն ձեռք առած միջոցները՝ Բարակը բերդէն դուրս, յանկարծակի, որսի միջոցին ձերբակալելու, որեւէ տարակոյս չեն թողուր որ վտանգաւոր էր Բարակ, որ յետէ յանկարծակի եւ սպառնալարար չձերբակալուէր, կրնար զեռ փորձանք ըլլալ Սահլի եւ ալ-Աֆշինի ալ:

Բարակ այսպէս որսի ատեն յանկարծակի ձերբակալուեցաւ ալ-Աֆշինի հրամանատարներէն: Բար Հերբայուս տարբեր կը պատմէ զէպըր՝ ըսելով. «Երբ Բարակ, Խուարազմիկ ապստամբը, տեսաւ որ իր կուսակիցները անզօր են, իր դրամները բեռցուց (զրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ զէպի Հոռոմոց երկիրը: Եւ երբ Հայաստան հասաւ՝ որոշ ազնուական մը, որուն անունը Իսթաֆանուս էր, զինքը շողմեց եւ զինքը իր տէր տարաւ՝ իրր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր երկաթ կապանքներ զարկաւ: Եւ երբ Մուտաղիմ իմացաւ (ասիկա), Աֆշինը՝ իր բանակին հրամանատարը զրկեց Իսթաֆանային նուէրներ

րով, եւ անոնք առին Բարակը եւ սպաննեցին: Որովհետեւ այս մարդը բնաջնջած էր աւելի քան հարիւր հազար արարական զօրքեր»:

Բար Հերբայուս նախ չի յիշեր Սահլ Իպն Սնրատը՝ իրր զլխաւոր գերակատար Բարակը ձերբակալողներուն գործակից. այլեւ Իսթաֆանուս հայ իշխանը ցոյց կուտայ բուն ձերբակալող: Բար Հերբայուս ալ վերոյիշեալ անանուն արար պատմիչի հատուածին համաձայն՝ Բարակի բնկերացող հետեւորդներու գոյութիւնը կը հաստատէ եւ զանոնք մինչեւ 400 հոգիոց պատկանելի ոյժի մը կը հասցնէ:

Սահլ վարձատրուեցաւ նիւթապէս ալ: Բարակ, ըստ Տարարիի, կ'այսպէս Սահլը իր ձերբակալուելու պահուն, եւ ինք պատրաստ էր արարացուց տուածէն աւելիովն իսկ զինքը վարձատրելու՝ եթէ զրամ էր Սահլի ուղածը: Տարարիի այս վկայութիւնը, իր ձեռով մեզի խորհիլ կուտայ որ Սահլ զրամի համար չէր որ Բարակը արարացուց կը յանձնէր: Սահլ իր հայրենիքը աւերողէն վրէժ կ'առնէր: Տեսանք որ Մակդիսի կը վկայէ Սահլի Բարակէն կալանաւորուելը, իր մօր, քրոջ եւ կնոջ անկէ պղծուելը:

Եւզուպիի համաձայն՝ ալ-Աֆշին խոստացած էր Բարակ իրեն յանձնողին մէկ միլիոն դրամ, այսինքն 40-50·000 ոսկի զինար: Հաւանաբար այս եղաւ Սահլի վարձքը:

Բարակ զրկուեցաւ Խալիֆային, եւ ինչպէս ըսինք՝ սպաննուեցաւ<sup>(9)</sup>:

(9) Տարարիի հետ գերի բռնուեցան, ըստ Տարարիի, 3·309 հոգի. իսկ ըստ Իպն Խալուանի՝ 3·300 հոգի: Իսկ Բարակի գերութենէն փրկուեցան 7·600 կիներ եւ մանկահասակներ, դարձեալ ըստ Տարարիի, թէեւ Իպն Խալուան միայն կիներ կը նշանակէ: